Հայտարարություն՝ «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում ազգային փորձագետների կարճաժամկետ ծառայությունների ձեռքբերման համար մրցույթին մասնակցելու մասին

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ/ *TERMS OF REFERENCE (TOR)*

2021 **թվականի հուլիսին մեկնարկել է Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի թիրախային նպատակներից է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին և զոհերին աջակցության/վերաինտեգրման ծառայությունների բարելավումը և կատարելագործումը:**

«Վորլդ Վիժն ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2021 թվականի հոկտեմբերի 15-ին կնքել են Համագործակցության մասին հուշագիր, որի շրջանակներում նախատեսվել է համատեղել ջանքերն ու ռեսուրսները օրենսդրության կատարելագործման, նոր ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման և զարգացման գործում: Այս առումով, ոլորտային կարևորագույն խնդիրներից է նաև թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին և զոհերին ուղղված աջակցության և վերաինտեգրման ծառայությունների համակարգի զարգացումը, քանի որ այն կարևոր գործոն է հանդիսանում կրկնակի զոհականացման բացառման և անձի համար բարենպաստ սոցիալական միջավայր ապահովելու և նրան բնականոն կյանքի վերադարձնելու համար:

Միևնույն ժամանակ, թրաֆիքինգի զոհերին ուղղված վերաինտեգրման ծառայություններին անդրադարձ է կատարվել նաև ԱՄՆ պետքարտուղարության կողմից հրապարակված Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ Հայաստանի 2021 թվականի և նախորդող տարիների զեկույցներում, որտեղ առաջնահերթ անելիքների առաջարկներում նշվել է, որ պետությունը պետք է ավելացնի զոհերի վերաինտեգրմանն ուղղված միջոցները:

<u>ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ</u>

Հաշվի առնելով վերոգրյալը՝ թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերի և զոհերի համար նախատեսված աջակցության և վերաինտեգրման ծառայությունների համակարգի բարելավման նպատակով՝ սույն տեխնիկական բնութագրի պայմանների շրջանակում ընտրված փորձագետները ***(ԼՈՏ-1* և ԼՈՏ-*2)*** **<u>համագործակցության սկզբունքով</u>** պետք է.

1. իրականացնեն ոլորտային ազգային օրենսդրության ուսումնասիրություն և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հարցազրույցներ՝ վերլուծելով ներկայում գործող ծառայությունները, դրանց արդյունավետությունը և կիրառման հետ կապված խնդիրները և բացերը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է, որպեսզի ուսումնասիրվի նախատեսված ծառայությունների հասցեականությունը հավանական զոհերի և զոհերի հատուկ կարիքների տեսանյունից, այդ թվում՝ թրաֆիքինգի զոհերին խոցելի խմբերի համար նախատեսված պետական բնակարանային ապահովման ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունը ***(ԼՈՏ-1)*:**

2. Առանձնացնել տղամարդկանց և բավարար ներկայացուցչություն չունեցող այլ խմբերը (այդ թվում՝ թրաֆիքինգի զոհ կամ հավանական զոհ հանդիսացող օտարերկրացիներին), ուսումնասիրել նշյալ խմբերի հատուկ կարիքները և վերլուծել նախատեսված աջակցության/վերաինտեգրման ծառայությունների հասցեականությունը և արդյունավետությունը նրանց համար ***(ԼՈՏ-1)***:

3. Ուսումնասիրել և նկարագրել աջակցության/վերաինտեգրման ծառայությունների վերաբերյալ միջազգային ստանդարտներն ու դրական պրակտիկան գործող համակարգերի մասով՝ Հայաստանի Հանրապետությունում նախատեսված ծառայությունների զարգացման կամ նոր տեսակի ծառայությունների ներդրմանն ուղղված առաջարկները ձևավորելու ընթացքում կիրառելու նպատակով ***(ԼՈՏ-1)*:**

4. Նշյալ երեք կետերում նախատեսված ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփելու արդյունքում ձևավորել հավանական զոհերի և զոհերի հատուկ կարիքների գնահատմամբ հասցեական առաջարկներ աջակցության/վերաինտեգրման ծառայությունների նոր տեսակների ներդրման ուղղությամբ, այդ թվում՝ տղամարդկանց և բավարար ներկայացուցչություն չունեցող այլ խմբերի համար, ինչպես նաև ուղղված գործող համակարգի կատարելագործմանը ***(ԼՈՏ-1)*:**

5. **Հաշվի առնելով վերոնշյալ ուսումնասիրության արդյունքները՝** իրականացնել մարդկանց թրաֆիքինգի հավանական զոհերի և զոհերի աջակցության ծառայությունների ֆինանսավորման առկա կարգավորումների ուսումնասիրություն, գնահատել ծառայության տեսակներից յուրաքանչյուրի արժեքը և առաջարկել ծառայությունների ֆինանսական հաշվարկներին ուղղված արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև աջակցության/վերաինտեգրման ծառայությունների նոր տեսակների ներդրմանը և գործող համակարգի կատարելագործմանն ուղղված հաշվարկներ ***(ԼՈՏ-2)*:**

<u>Համապարփակ արդյունքները կներկայացվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ դրանց հիման վրա</u>

<u>օրենսդրական փոփոխությունների հարցը քննարկելու և համապատասխան առաջարկով ՀՀ կառավարությանը հանդես գալու նպատակով:</u>

<u>ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ</u>

Սույն առաջադրանքի պայմաններով նախատեսված աշխատանքները կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին և զոհերին մատուցվող աջակցության/վերաինտեգրման ծառայությունների հասցեականության և արդյունավետության բարձրացմանը, ինչի արդյունքում էլ կապահովվի անձի լիարժեք վերաինտեգրումը հասարակական կյանքին և կբացառի կրկնազոհացումը:

<u>ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ</u>

Ծրագրի թիմ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Պատվիրատուի և ծառայություն մատուցողների կողմից որոշված այլ շահագրգիռ կառույցներ և անձինք:

<u>ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ</u>

<u>ԼՈՏ *1* – Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հավանական զոհերին տրամադրվող աաջկցության/վերաինտեգրման ծառայությունների համակարգի ուսումնասիրության և համապատասխան առաջարկների մշակման համար դիմող փորձագետը պետք է ունենա՝</u>

✔ իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն (գիտական աստիճանի առկայությունը ցանկալի է),

✔ առնվազն երեք տարվա մասնագիտական ստաժ*, որից առնվազն մեկ տարին պետք է կապված լինի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ոլորտում ծավալած պրակտիկ գործունեության հետ:

<u>ԼՈՏ *2* – Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին և հավանական զոհերին տրամադրվող աջակցության/վերաինտեգրման ծառայությունների վերաբերյալ ձևավորված առաջարկների ֆինանսական վերլուծության համար դիմող փորձագետը պետք է ունենա՝</u>

✔ ֆինանսիստի բարձրագույն կրթություն,

✔ առնվազն հինգ տարվա մասնագիտական ստաժ* և սոցիալական համակարգի և ծառայությունների ֆինանսական վերլուծություններ կատարելու փորձ:

***Մասնագիտական ստաժում կդիտարկվի միայն վերջին հինգ տարիների ընթացքում դիմումատուի աշխատած ժամանակաշրջանը*:**

<u>Լեզուների իմացություն</u> - հայերենի, ռուսերենի և անգլերենի մասնագիտական
իմացություն:

<u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ</u>

- Ծառայությունները մատուցվելու են «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա ***<u>2022 թվականի հունիսի 06-ից – 2022 թվականի հուլիսի 20-ը՝ ներառյալ</u>***, ընկած ժամանակահատվածում՝ որպես սկզբնաժամկետ է դիտարկվում ***<u>2022 թվականի հունիսի 06-ը:</u>***
- Ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի պայմանագրով սահմանված ժամկետում՝ ըստ անհրաժեշտության հնարավորինս սեղմ ժամկետում Պատվիրատուին մանրամասն տեղեկություններ տրամադրելով աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ:
- Պատվիրատուն վճարումը կկատարի աշխատանքներն ավարտելուց հետո վերջնական հաշվետվությունը ներկայացնելուց և երկուստեք ստորագրված ընդունման-հանձնման ակտի հիման վրա՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

<u>ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ</u>

- Մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել.
- անձը հաստատող փաստաթուղթ,
- ինքնակենսագրական (CV),
- մոտիվացիոն նամակ, որում պետք է հստակ մատնանշվեն նախկին համանման փորձառությունը՝ աշխատելու ժամանակաշրջանի մատնանշմամբ և իր կողմից մատուցվելիք ծառայությունների առավել որակյալ մատուցման հիմնավորումը, այդ թվում՝ ծառայությունների մատուցման ժամանակացույցը և աշխատանքների իրականացման մեթոդաբանությունը,
- կրթության և աշխատանքային փորձի առկայությունը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ, քաղվածք՝ աշխատանքային գրքույկից և այլն),
- վարձատրության բյուջեն (մեկ օրվա ակնկալվող վճարը՝ ներառյալ հարկերը):

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է՝ ***<u>2022 թվականի մայիսի 30-ը:</u>***